

ՇԱՆՏ ԱՐԵՂԱ ԱՆԱՆՅԱՆ

ՆԱՄԱՍ ԱՐԵՎԵԼՅԻ՝ ՄԵԿՆԻՉ ՍՈՒՐԲ ԳՐՈՅ

Նամամ Արեւելցի մաթեմատիկոսի և մեկնաբանի մասին պատմական պեղելություններն այնքան էլ ամբողջական չեն՝ հակառակ սկզբնաղբյուրներում նրա մասին առկա բավական շատ պեղելություններին: Ըստ էության, հայոց մաթեմատիկոսության պատմության մեջ առաջին անգամ քիչ թե շատ ամբողջական և սպառիչ դիտարկում անելու փորձ է արել Կ. Կոստանյանցը՝ իր փոքրածավալ, բայց բավական արժեքավոր մեկնադրությամբ¹: Ներագայում ուսումնասիրողների մեծ մասը պակաս կամ առավել չափով հակված է եղել Կ. Կոստանյանցի պեսակետին²: Ըստ այսմ, Նամամն³ Աղվանից աշխարհի թագավորն է եղել Թ դարում և ունեցել գրական հեղափոխությունների բավական լայն շրջանակ. համեմայն դեպս այդ են վկայում նրա անունով մեզ հասած երկերը: Նամամի անունով պահպանված անվավեր շարականից եզրակացրել են, որ նա, հավանաբար իր եղբոր մահվան պատճառ է դարձել արաբական բռնավորի դրոմամբ, ապաշխարում է, հրաժարվում գահից, դառնում կրոնավոր՝ ընդունելով Նովիաննես անունը և առանձնանում է վանքերից մեկում⁴: Ստորեւ պալիս ենք այդ շարականի՝ մեզ հեղափոխող պողերը.

Այբ անարեւնք կոչեցին զիս հաղորդիլ արեան մահու:
Գնացի զճանապարհս ձախակողմեան,
Կարարեցի զգար խորհուրդս նոցա,
Աղաչեմ զքեզ, ներեա յանցանաց իմոց, ողորմած⁵:

Նամամ Բագրատունու՝ իբրեւ Աղվանից թագավորի և Նայոց Գեորգ Բ Գառնեցի Կաթողիկոսին արաբական գերությունից ազատագրողի մասին մեծ դրվապանքով է խոսում Մովսես Կաղանկարվացին⁶: Ըստ պատմագրի՝ Նամամը եղել է Աղուանից թագավորության վերականգնողը, ապրել ու գործել է Աշոտ Բագրատունի Նայոց արքայի օրոք (885-890)⁷: Գեորգ Կաթողիկոսին արաբական գերությունից ազատագրելու նրա նախաձեռնության մասին վկայում է նաեւ Նովիաննես Դրասխանակերպցին⁸:

1 Կ. Կոստանյանց, Նամամ Արեւելցի, Վաղարշապատ, 1896:

2 Ավելի հանգամանորեն փնն Կ. Մանգականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ, 1966, էջ 181-204:

3 «Նամամ» արաբերեն նշանակում է «աղավնի», «փայրակ», հմմտ. R. Thomson, Commentary on the Book of Proverbs, Peeters, Leuven-Paris-Dudley (Hebrew University Armenian Studies 5) 2005, 1:

4 Տեն Սահակ վրդ. Ամստունի, Նին և նոր պարականոն կամ անվաւեր շարականներ, Վաղարշապատ 1911, էջ 163-164:

5 Անդ, էջ 163:

6 Մովսես Կաղանկարացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 383:

7 Հմմտ. Կ. Մանգականյան, նշվ. աշխ., էջ 187:

8 Յովհաննէս Դրասխանակերպցի «Պատմութիւն Նայոց», Թիֆլիս, 1912: R. Thomson-ը՝ Նամամի՝ Առակց գրքի մեկնության անգլիացի թարգմանիչը, չբացատրելով հանդերձ Նամամի թագավորազն ու թագավոր

Դապելով փարբեր պարմիչների վկայություններից՝ Նամամ Արեւելցու մարենագրական ժառանգությունը⁹ կարելի է դասակարգել հետեւյալ կերպ.

1. Շարական Նամամայ - հայրնի է մի քանի ձեռագրերով եւ փապգրված Սահակ վրդ. Ամապունու կողմից¹⁰.

2. Մեկնութիւն Քերականին - հրապարակվել է Ն. Ադոնցի նշանավոր երկում՝ իբրեւ Դիոնիսիոս Թրակացու հայերեն մեկնություններից մեկը: Ցավոք, բնագիրը մեզ չի հասել ամբողջական փեսքով¹¹.

3. Մեկնութիւն Սաղմոսաց - համարվում է կորած: Մեզ են հասել միայն մի քանի կցկտուր մարենագրական վկայություններ սույն երկի մասին¹².

4. Մեկնութիւն Ամբիծք սաղմոսին - կորած.

5. Մեկնութիւն Յորայ «Ո՛վ է դա»-ին - հրապարակվել է Մարենագիրք Նայոց

լինելը եւ մարենագրական բուն գործունեության հնարավորությունը, այնուամենայնիվ, նախապարվությունը փայլա է Ասողիկ Պարմիչի վկայությանը (էջ 2-3): Նարկ է նշել, սակայն, որ Thomson-ը հավանաբար ծանոթ չէ Ա. Մնացականյանի՝ ձեռագրական բավական համոզիչ փաստարկներին, որպելից եւ՝ անգլիացի հայագետի վարանումը Նամամ թագավորի եւ մարենագրի նույնացման հարցում:

9 Տե՛ս մասնավորաբար **Մխիթար Այրիվանեցի**, Պարմութիւն Նայոց, Մոսկվա, 1860, էջ 55: ՄՄ Ձեռագիր Նմր 5128:

10 Նշվ. աշխ.

11 Տե՛ս, **Н. Адонц**, Дионисий Тракийский и Армянские Толкователи, Петроградъ 1915, էջ. 253-284:

12 Տե՛ս **Մխիթար Այրիվանեցի**, Պարմութիւն Նայոց. «Նամամ, որ եւ Յովհաննէս Բագրատունի, մեկնեաց զԱռական եւ եղ զվերջի գորդայսն ի գլուխ Սաղմոսացն», էջ 55: Ուշագրավ է նաեւ ՄՄ-ի ՆՊ 5128 ձեռագրի հիշարակությունը. «... եւ ամէն կանոն է գորդա է եւ զեփին գորդայք ի մարգարէիցն առեալ մեծ վարժապետն հայոց Նամամ Յոհաննէս ամօղ թագաւորին Աշտուղ Բագրատունոյ, եւ երբ ասել ի վերջ փան սաղմոսացն «Փառք յարութեան քո Տէր»...» հմմտ. **Ա. Մնացականյան**, նշվ. աշխ., էջ 200: «Ջեփին գորդայք ի մարգարէիցն առեալ» արքայապետությունը միայն է փայլա սաղմոսերգության հին ավանդական ձեռն, այսինքն՝ Սաղմոսների եւ օրհներգությունների՝ նույն գրքի մեջ միաբերումն մասին: Մարգարէիցն արքայապետություն ակնհայտորեն մարենանշում է մարգարեական գրքերից քաղված այն օրհներգությունները, որոնք վաղ քրիստոնեական պաշարմունքի մաս էին կազմում Սաղմոսների հետ: Նույնպես հնագույն ձեռագրերից Alexandrinus-ն է, որ պահպանել է Սաղմոսների եւ օրհներգությունների այս համապետման կարգը հետեւյալ հերթականությամբ՝ Եղից Ա 1-19, Բ Օրինաց ԼԲ 1-43, Ա Թագ. Բ 1-10, Ամբ. Գ 2-19, Եսայի ԻԶ 9-20, Նովն. Բ 3-10, Դան. Գ 52-88, Դով. Ա 46-55, 68-79, Եսայի Ե 1-9, ԼԸ 10-20, Մանասեի աղոթքը (հմմտ. Բ Մնաց. ԼԳ 11-13), Սիմեոն Ծերունու աղոթքը (Դով. Բ 29-32): Ներառաբար, ձեռագրի հիշարակությունը վերաբերում է սույն աղոթակարգի հինկարականության մասերին, որոնց հեղինակները բոլորն էլ մարգարեներ են: Այս առումով ավելի ուշագրավ եւ շահեկան է Սյրեփանոս Տարսնեցի Ասողիկի հաղորդած փեղեկությունը. «Եւ Նամամ արեւելցի որ զվերլուծութիւն Առական գրեաց, եւ Այս ո՛վ է դան թարգմանեաց եւ զօրհներգութիւնսն որ ի գլուխ սաղմոսացն արարեալ ի գիրս մի եւ վերլուծութիւն քերականին...», («Տիեզերական Պարմութիւն», աշխ. Կարապետ վրդ. Շահնագարեանց, Փարիզ, 1859, էջ 145): Փաստորեն, Նամամը, եկեղեցական պաշարմունքը հեշտացնելու նպատակով, Սաղմոսների ութ կանոններից յուրաքանչյուրի վերջում դրված այս հինկարականյան օրհներգությունները զեփելել է մի գրքի մեջ՝ իբրեւ առանձին ծխական միավոր: Այս կանոնակարգը պահպանվել է Աստվածաշնչի հայերեն ձեռագրերից մեծ մասի մեջ (փնս օր.՝ Ձեռգրք. ՄՄ Նմր.142, 182, 183, 188, 195, 353, 354, 2628, 4905, հմմտ. **Շահէ արք. Աճեմնան**, Մայր ցուցակ Աստուածաշնչի հայերեն ձեռագրաց, Լիսաբոն 1992): Նամամը, ըստ Այրիվանեցու վկայության, ամեն սաղմոսի վերջում «Փառք յարութեան քո Տէր» ավելացնելով, դրանք քրիստոնեացնելու փորձ է կատարել, ինչը մինչեւ օրս էլ կիրառվում է Նայսապանեայց եկեղեցու սաղմոսերգության մեջ: Այս առումով քիչ փրամաբանական ու հիմնավորված է հնչում Ն. Վ. Կացունու կարծիքը, թե՛ Նամամը «խրաբանչիւր կանոնի վերջին գորդային մեծագույն կարեւորութիւն մը փութաւ, ինչ որ արդէն չափով մը ունէին Ե դարէն. եւ ինչ հաւանորեն ծանրացուց անոնց եղանակը», «Պարմութիւն Նայոց աղօթամատուցի», Վենեթիկ, 1965, էջ 222): Սաղմոսասացության վերոնշյալ կարգը պահպանվել է նաեւ փապգիր Սաղմոսարաններից շարքի մեջ, հմմտ. **Շահէ արք. Աճեմնան**, Գիրք Սաղմոսաց Դաթի ըստ 1868-ին Երուսաղէմի մէջ փապգրում բնագրի, Երուսաղէմ. 1988, էջ 10-11:

մաքենաշարի Թ հափորում (Անթիլիաս, Լիբանան, 2008, էջ 522-533)՝ երկու ձեռագրային փարբերակներով, Ն. Քյոսեյանի աշխատասիրությամբ.

6. Պարմական մի երկ - կորած.

7. Մեկնություն Առակացն Սողոմոնի - առաջին անգամ փայագրվել է 1994թ. Տ. Մխիթար քին. Սարիբեկյանի աշխատասիրությամբ, «Աստվածաշնչական մեկնություններ» շարքի մեջ¹³: Սույն երկի գիտաքննական բնագիրը՝ գոյություն ունեցող բոլոր ձեռագրերի համեմատությամբ եւ անգլերեն թարգմանությամբ, լույս է ընծայել Ռ. Թոմսոնը¹⁴: Նամամի այս գործն իր փեսակի մեջ հայ մեկնաբանական մարքի հնագույն նմուշներից է: Ըստ այդմ, Արեւելցու այս երկը՝ իբրեւ մեկնողական եւ գրական մի ամբողջություն, ավելի մեծ հնարավորություն է փայլա՝ խոսելու նրա մեկնաբանական մեթոդի մասին:

8. Մեկնություն Դիոնիսիոսի Արիսպագացոյ - պահպանված է մեկ ընդօրինակությամբ՝ Փարիզի ազգային գրադարանում¹⁵, ցարդ՝ անփյույ:

9. Նամամի գրչին որոշակի վերապահումներով վերագրված մի երկ էլ՝ «Նամառօր յերաժշտական արուեստի յարապ գրոց», փայագրվել է «Բազմավեպ» հանդեսում՝ ֆրանսերեն հանդիպադիր թարգմանությամբ¹⁶: Ինչպես նշում է հրապարակիչը, Նամամի «Մեկնություն քերականին»-ի մեջ առկա որոշ հարվածներ իրենց ոճով ու բառապաշարով նմանության եզրեր ունեն երաժշտության մասին վերոնշյալ բնագրի հետ, ուստի եւ այն հրապարակվում է իբրեւ Նամամի անունով պահպանված մաքենագրական մի նմուշ¹⁷:

Նամամ Արեւելցի մեկնիչի անձի եւ մաքենագրական վաստակի այս համառոտ ներկայացումից հետո անդրադառնանք նրա մեկնողական մեթոդին: Անշուշտ, մեթոդ ասելով նկատի չունենք, թե Նամամի նպատակն է եղել ստեղծելու ամբողջական մեկնաբանական-

13 **Սյրեփանոս Մինեցի**, Մեկնություն չորից Անպարանաց - **Նամամ Արեւելցի**, Մեկնություն Առակաց, «Արեւգ» հրապարակչություն, Երևան, 1994:

14 **R. Thomson**, նշվ. աշխ.:

15 Ըստ Ֆ. Մակլերի նկարագրության ("Catalogue des manuscrits arméniens et géorgiens", Paris, 1888, p. 65) Ն^թ 123 ձեռագիրը (հին համարով՝ 60) բաժանված է երեք մասի. առաջինը պարունակում է 15, երկրորդը եւ երրորդը՝ համապատասխանաբար մեկական ճառեր: Ձեռագիրը ԺԴ դարի է, բոլորգիր՝ 34 թերթ: Նամամապարար վերջերս փայագրված նոր Catalogue des manuscrits arméniens-ի մեջ (**Raymond H. Kévorkian & Armen Ter-Stepanian**, Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France, Paris 1998) ձեռագիրն ավելի մանրամասնորեն է նկարագրված՝ ա. Թ-թ. Ա-Ի-Է - Նամամ վարդապետի՝ բանլուծակ բանից Դիոնիսի, բ. Թ-թ. Ի-Է-ԼԱ - Յաղագս եկեղեցական քահանայապետության, գ. Թ-թ. ԼԱ-ԼԴ - Յաղագս սուրբ մկրտության կապարման, վերջում՝ Յիշատակարան: Նույն երկի մի այլ ընդօրինակություն էլ հայտնաբերել է Ա. Մնացականյանը (նշվ. աշխ., էջ 193) ՄՄ-ում՝ Ն^թ 6362 ձեռագրում: Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, ձեռագրի վերջում առկա որոշ անճշտություններ կասկածի փակ են դնում Նամամի հեղինակության հարցը: Նամամի այս երկը Դիոնիսիոսի գործերի մյուս հայերեն «Լուծմունքների» հետ անգլերեն թարգմանությամբ հրապարակել է **Sergio La Porta**-ն, Two Anonymous Sets of Scholia on Dionysius The Areopagite's Heavenly Hierarchy, CSCO vol. 623, Lovanii, in Aedibus Peeters 2008, vol. 624՝ անգլերեն թարգմանություն, vol. 625՝ ուսումնասիրություն գրական եւ ձեռագրային աղանդության մասին : Նեղիմակը, որեւէ միջնադարյան մեկնիչի զվերագրելով հանդերձ սույն «Լուծմունքը», այն թվագրում է ԺԳ դարով. փնս vol. 625, էջ 5-9:

16 «Բազմավեպ», 1875, էջ 358-366:

17 Անդ, էջ 359:

աստվածաբանական մի համակարգ: Ավելի շուտ դիտարկելու ենք Նամամի մեկնությունների եւ մեկնաբանական ձեւերի մեջ առկա նմանությունները՝ դրանք ի մի բերելով եւ վերլուծելով իբրեւ համայնապարկեր Նամամի մեկնաբանական վաստակի՝ բնականաբար, առանց մոռանալու այդ մեկնությունների սպեղծման շարժառիթներն ու նպատակները:

Մեր մատենագրի գրական վաստակից առանձնանում են հատկապես երկու գործ՝ «Մեկնութիւն Յոբայ «Ո՛վ է դա»-ին» (գլ. ԼԸ 2 - ԼԹ 30) եւ «Մեկնութիւն Առակացն Սողոմոնի», որոնց մեջ կարելի է քիչ թե շատ հստակությամբ նշմարել մեկնողական ուրույն համակարգի առկայության նշաններ:

Նայ իրականության մեջ Նոբի գրքի ԼԸ գլուխն ընկալվել է իբրեւ աներետոյթ Աստծո հայրնությունը Նոբին, ինչպես շեշտվում է Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկի հայերեն թարգմանության մեջ¹⁸.

«Տեսանե՛ս այր դու զճարտարապետն, տեսանե՛ս զանձին քո զձեռնապետն: Զայս ամենայն քեզ դիւրագոյն լայնեաց բանս ի բազում եւ յայլ բիւրաւոր բանից լքելոց. եւ առաւել եւս անմարմինն աներետոյթն. զի արեւցես դու զհայիոյիչսն եւ զիմաստութեան բարերար ճարտարապետ օրհնեսցես»¹⁹:

Նոբ ԼԸ-ը, բացի Կյուրեղ Երուսաղեմացու երկի հայերեն թարգմանությունից, իր ուրույն տեղն ունի նաեւ Մեծ Պահքի աստվածաշնչային ընթերցումների մեջ: Ըստ այսմ, Երուսաղեմի Ն^թ.121 ձեռագրում²⁰ Նոբ ԼԸ 2-ի 5 հատվածը Քառասնորդաց Պահքի 17-րդ օրվա իններորդ ընթերցումն է, իսկ Նոբ ԼԸ 2-28-ը՝ Զատիկի ճրագալույցի յոթերորդ ընթերցումը: Նարկ է նշել, որ այսօր էլ Նայ Եկեղեցու պաշտոնական ճաշոց գրքի մեջ Նոբ ԼԸ 2-29-ը ճրագալույցի ժամանակ ընթերցվող սուրբգրային կարեւոր պատումներից է²¹, որպեղ խորհրդաբանորեն ներկայանում է Աստծո Որդու հայրնությունն աշխարհին եւ մարդուն: Վերոնշյալ հատվածի նկատմամբ նմանապիպ մոտեցումը պայմանավորված է նաեւ առաքելական եւ ավելի ուշ շրջանի եկեղեցական հայրերի եւ ուսուցիչների երկերում նրա՝ իբրեւ Աստծո անճառելի բնության մասին փաստող եւ նույն այդ անհասանելի բնության առաջ մարդկային մարքի սահմանափակության ընկալման իրողությամբ: Ավելի հստակ պարկեր ունենալու համար բերենք մի քանի օրինակ²²:

18 «Կիւրղի Երուսաղեմայ Նայրապետին Կոչումն ընծայութեան», Կ. Պոլիս, 1727, էջ 156:

19 Անդ:

20 Տե՛ս **Athanase Renoux**, *Le Codex Arménien Jérusalem 121*, II. Édition comparée du texte et de deux autres manuscrits, PO 36, fsc. 2, n° 168, Brepols, Turnhout/Belgique 1971.

21 Տե՛ս «Ճաշոց Գիրք Նայրապետայց Սուրբ Եկեղեցոյ», Վաղարշապատ 1872, էջ 255-256:

22 Օրինակները բերվում են ըստ հայրաբանական սուրբգրային մեջբերումներն ամփոփող հետևյալ բազմափայտ հրապարակության՝ «Biblia Patristica; Index des citations et allusions bibliques dans la littérature patristique», հղ. Ա-Զ (1975-1995), éd. CNRS, Paris:

ա. Տերպողիանոսն «Ընդդեմ Պրաքսասի» իր ջափագովական երկում (գլխ. ԺԶ, 6)²³, մարնանշում է Նոբ ԼԸ 5-ը՝ իբրեւ «Նին Կրակարանում Աստծո Որդու մարդեղության վերաբերյալ ամենավաղ մարգարեություններից եւ վկայություններից մեկը»²⁴:

բ. Կղեմնե Ղոմեացին, Կորնթացիներին ուղղված նամակի մեջ (գլխ. Ի 6)²⁵ խոսելով մարդկանց միջեւ խաղաղության, սիրո եւ փոխըմբռնման անհրաժեշտության մասին, իբրեւ լավագույն օրինակ է բերում փիեզերքում Տիրոջ հաստատված ներդաշնակությունը, որը ոչ մի կերպ հնարավոր չէ խախտել. «Ծովի անսահմանությունը սահմանվել ու հաստատվել է ըստ արարչական արվեստի, հատուկ շարժարաններում»²⁶. նա երբեք չի խախտում այս նշված սահմանները, այլ միշտ գործում է ըստ սահմանված կարգի: Քանզի Նա նրան ասաց. «Մինչեւ այդ վայրը կգաս ու առաջ չես անցնի» (Նոբ ԼԸ 11)²⁷:

գ. Թեոփիլոս Անտիոքացին իր՝ «Առ Ավրոլիկոս» եռամասնյա աշխատության Ա գրքում (գլ. Է)²⁸ ակնարկում է Նոբ ԼԸ 18-ի մասին՝ մարդկային խելահասությունը ստորակա համարելով աստվածային իմաստությանը:

Ավելի ուշ շրջանի (սկսած Դ դարից) հայրաբանական երկերում Նոբ ԼԸ-ն ի հայտ է գալիս ավելի կանոնավոր ու հղկված աստվածաբանական-խրատական բովանդակությամբ: Մասնավորապես Կյուրեղ Երուսաղեմացու՝ քրիստոնեական ուսուցումը նորադարձներին ավանդող ճառերում Նոբի վերոնշյալ պատումն առանձնահատուկ տեղ ունի. Կյուրեղի Թ ճառը նվիրված է Նոբ ԼԸ 2-3 խոսքերի մեկնաբանությանը²⁹, իսկ ԺԱ ճառի մեջ Կյուրեղը Նոբ ԼԸ 14-ն իբրեւ խորհուրդ է ընդունում՝ սքանչանալով փիեզերքի արարչությամբ³⁰: Նայ իրականության մեջ Նոբ ԼԸ-ի լայն գործածությունը թերեւս պայմանավորված էր այն ուսուցողական-դավանաբանական նշանակությամբ, որ պատմին Կյուրեղ Երուսաղեմացու աստվածաբանական հանճարը: Բավական է նշել միայն, որ Եփրեմ Ասորու՝ Նոբի գրքի մեկնությունն³¹ իբրեւ սկզբնաղբյուր օգտագործել է Եզնիկ Կողբացին³², իսկ ավելի ուշ՝ նաեւ Սյրեփանոս Սյունեցին³³: Ավելին, Գրիգորիս Արշարունու կողմից

23 A. Roberts, J. Donaldson (ed.), *The Ante-Nicene Fathers ; Writings of The Fathers down to A. D. 325*, vol. 3, *Latin Christianity: its founder, Tertullian*, Ages Software, Albany, Oregon 1996-1997, p. 1110:

24 Անդ, էջ 1111:

25 “Épître aux Corinthiens”, introduction, texte, traduction, notes et index par Annie Jaubert, SC 167, Paris 1971, էջ 134-135 ; հմմտ. նաեւ երկի հայերեն թարգմանությունը՝ Գանձասար հր. Ե, Երեւան 1994, էջ 98-133, հր. Զ Երեւան 1996, էջ 203-227, թրգմն.՝ Ս. Գրքաշարյան, ծնթգր.՝ Միքայել Ծ. վրդ. Աջապահյան:

26 Գրք.՝ **Ի Ժողով մի**, հմմտ. Ծննդ. Ա 9:

27 “Épître aux Corinthiens”, p. 134:

28 Stén **Théophile d’Antioche**, *Trois livres à Autolycus*, texte grec établi par G. Bardy, traduction de Jean Sender, introduction et notes de Gustav Bardy, SC 20, Paris 1948, էջ. 73:

29 Stén **PG** 20, Cath. 9 ; **Ph. Schaff** (ed.), *The Nicene and Post-Nicene Fathers of Christian Church*, vol. 7, St. Cyril of Jerusalem and St. Gregory of Nazianzen, AGES Software, Albany, Oregon 1996-1997, էջ. 190-197:

30 **PG** 20, Cath. 11, 23.

31 **Ն. Արիստակես Վարդանեան**, Սրբոյն Եփրեմի մեկնություն եւ սկիզբն Յոբայ, Դասական մանր բնագրեր եւ ձեռագրական համեմատություններ, «Ազգային Մատենադարան» ՆՔ, Վիեննա, 1913, էջ 63-94:

32 **Լ. Տեր-Պետրոսյան**, Եփրեմ Ասորու Նոբի մեկնությունը Եզնիկ Կողբացու աղբյուրներից, ԲՄ 16 (1994) էջ 7-15: Ըստ անվանի գիտնականի, Նոբի այս մեկնությունը պետք է թարգմանված լինի 440 թ. առաջ (էջ 14) ասորերենից՝ հաշվի առնելով հեղինակի կողմից պատրաստված ասորաբանությունների բավական ներկայանալի ցուցակը (էջ 8):

33 **Ն. Արիստակես Վարդանեան**, նշվ. աշխ., էջ 77: Սյրեփանոս Սյունեցու «Մեկնություն եւ սկիզբն Յոբայ»

«Մեկնություն ընթերցում»-ի ստեղծումը Ը դարում³⁴ վկայում է արդեն այն պահանջի մասին, որ ունեցել են Կյուրեղի ճառերն ու «ներածական խորհրդաբանությունները» (mystagogia), նրանց հետ նաև Նոր ԼԸ-ը, հայ եկեղեցական կյանքում:

Մի վերջին հանգամանք էս: Ինչպես տեսանք, Ստեփանոս Առողիկը վկայում է, որ Նամամը «թարգմանել» է Նոր ԼԸ-ն³⁵: Առաջին հայացքից կարելի է ենթադրել, որ Նամամը ոչ թե մեկնել է, այլ պարզապես թարգմանաբար շարադրել Նորի գրքի սույն պատումի մեկնությունը: Սակայն, նախ եւ առաջ «թարգմանել» բառի իմաստային ընդգրկունությունը թույլ է տալիս մեզ մի փոքր այլ կերպ ընկալելու պատմիչի վկայությունը: Ներքինը ՆԲՆԼ-ի բացատրությանը. «Թարգմանելն. թարգման գոլն, մեկնություն գրոց, մեկնաբանություն մթին եւ գաղտնի իրաց, ճառ, վերլուծություն, միտք բանին, իմաստ, նշանակություն»³⁶: Այնուհետեւ, Երուսաղեմի ՎՊ. 121 ձեռագրում պահպանված արժեքավոր տեղեկություն³⁷ իր հերթին «թարգմանել»-ն իբրեւ մեկնելու, վերլուծելու մի յուրահատուկ ձեւ ընկալելու հնարավորություն է տալիս: Ըստ այսմ, ձեռագիրը վկայում է քառասորդական պահքում տարածված քարոզչական մի տարատեսակի մասին. «Յեպ սաղմոսին ի թարգմանություն նսպին եւ արձակին երախայքն»: Նայանի է, որ Կյուրեղ Երուսաղեմացին քրիստոնեական վարդապետության ուսուցման համար իր ճառերը երկու հիմնական խմբերով է ավանդել. 19 ճառեր երախայից երկրորդ եւ վերջին կարգի՝ «լուսավորվածների» համար՝ Մեծի Պահոց քառասուն օրերի ընթացքի վրա տեղաբաշխված, եւ 5 խորհրդաբանական ներածություններ՝ Զատիկից հետո եկող շաբաթներում մկրվածներին ուսուցանելու համար³⁸: Վերոնշյալ տեղեկությունը վերաբերում է թերեւս երախայից երկրորդ կարգին՝ «լուսավորվածներին» (*φωτισμένοι*), ովքեր քիչ թե շատ հոգեւոր պատրաստվածություն ունեին հինկարակարանյան փողերի ենթահենքում թարգմանությամբ բացահայտվող Քրիստոսի խորհուրդն ըմբռնելու եւ հասկանալու³⁹ համար: Այսպիսով, «թարգմանել» եզրի նշանակության վրա այստեղ որոշակի լույս է սփռում երուսաղեմյան ծեսի սույն առանձնահատկության դիտարկումը, ինչը, սակայն, չի կարող հավակնել սպառնիչ եւ ամբողջական պատասխան լինելու:

Նամամ Արեւելցու Նոր ԼԸ-ի մեկնությունն⁴⁰ իր հակիրճ եւ այլաբանական վերլուծությամբ

երկը տպագրվել է նախապես Ն. Քերոբե Չրաքեանի կողմից՝ «Թանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց» շարքի Ե հատորում՝ իբրեւ «Յաւերում Դ» «Իսկրիտի Երկցու Երուսաղեմացոյ Մեկնութիւն Յորայ» տպագիր բնագրի (Վենետիկ, Սբ. Ղազար 1913, էջ 304-310), այնուհետեւ «Մատենագիրք Նայոց» մատենաշարի Թ հատորում, էջ 95-129:

34 Տե՛ս «Գրիգորիսի Արշարունոյ Քորեպիսկոպոսի Մեկնութիւն ընթերցում», ներածութիւն Ն. Ք. Վ. Չրաքեան, Վենետիկ, 1964:

35 Տե՛ս վերը՝ ծնթգր.13:

36 «Նոր Բազմիրք Նայկագեան Լեզուի», Սբ. Ղազար, Վենետիկ, 1857, փոխ «թարգմանութիւն» բառահոգվածը: Ներաբրքի է նաեւ բառի ասորական արմատը՝ **targ(u)ma**, որ նշանակում է «բացատրություն, մեկնություն, արձակ քարոզ». հմմտ. **Athanase Renoux**, *Le Codex Arménien...*, էջ 266: Մեկնության եւ թարգմանության հնարավոր աղերսների մասին ավելի մանրամասն փոխ **J.-P. Mahé**, «Traduction et Exégèse: Réflexions sur l'exemple arménien» in *Melanges Antoine Guillaumont* (Cahiers d'Orientalisme), Genève:

37 **Athanase Renoux**, նշվ. աշխ., էջ 267:

38 **Kilian McDonnell & George T. Montague**, *Christian Initiation and Baptism in the Holy Spirit: Evidence from the First Eight Centuries*, Collegeville, Minnesota 1994, pp. 191-193:

39 **Павел Гаврилюк**, *История катехизации в Древней церкви*, Москва, 2001, ст. 155.

40 Իրականում Նամամը մեկնում է Նոր ԼԸ 1-ԼԹ 30 բավական ընդարձակ հատվածը՝ նկատի ունենալով, անկասկած, դրա ծիսական կիրառությունը:

ավելի շուրջ մի հոգեւոր ընթերցման (scholia) փաստաթուղթն է թողնում: Նախ եւ առաջ պէտք է նշել, որ Նամամի այս երկը նպատակ ունի աստվածաբարացման (theodicy)⁴¹ ճանապարհով իրականացնելու Նորի մեկնությունը:

«Աստուած խառնելով ընդ Յոբայ՝ զնախաստեղծն թաքոյց, կամ վասն իւր ուղիղ վարուցն Յոբ ոչ արդար համարեցաւ զԱստուծոյ դատաստանն, յորժամ հարուածք ի Տեառնէ հասին ի վերայ նորա, այլ ապիրարութեամբ խորհեցաւ ի սրտի իւրում զԱստուծոյ, թէ Աստուած վկայեաց ինձ, թէ՛ «Յոբ արդար եւ աստուածապաշտ մեկնեալ յամենայն իրաց չարեաց» (Ա 1): Խորհէր, թէ վասն է՛ր է Աստուած զայս ամենայն ի վերայ իմ. անիրաւ խորհէր առնել զԱստուած: Վասն այտորիկ յանդիմանի յԱստուծոյ զասելով. Ո՛ր է դա»⁴²:

Այս մտքեցումը բավական յորօրինակ է եւ զգալիորեն փարբերվում է հայ մատենագրության մեջ հայրնի Նորի մյուս մեկնություններից: Հիսիքիոսի երկում, օրինակ, Նորը ներկայանում է իբրեւ ստարանայի դեմ մարտնչող ճգնաժողովի փիլապոս, Սրբեփանոս Սյունեցու խոսքերով Նորը նահապակ էր⁴³, իսկ Տաթեւացիին Նոր ԼԸ-ում նկարագրված Աստուծո հայրնությունը հետեւյալ կերպ է բացատրում. «Վասն է՛ր Աստուած խօսեցաւ ընդ Յոբայ: ... Նախ զի ունէր զամենայն առաքինութիւնս եւ համբերեաց նախապողացն. վասն որոյ խօսեցաւ Աստուած եւ միխթարեաց զնա: ... զի մի հպարտացի (Յոբ-Շ. Ա.) յեւր յաղթութեան ստարանայի, խօսեցաւ Աստուած եւ յաղթեաց բանիւ. զի փեսցէ զփկարութիւն իւր եւ խոնարհեցի»⁴⁴:

Զնայած Տաթեւացու այս վերջին արտահայտությունը որոշ չափով նմանության եզրեր կարող է ունենալ Նամամի մտքեցման հետ, սակայն, այնուամենայնիվ, Նամամի երկի մեջ լիովին բացակայում է Նորին իբրեւ նահապակ եւ փորձություններին դիմացող ճգնաժողովի ներկայացնելու միտումը: Նամամի մեկնաբանության մեջ Նորը թերեւս Ադամի եւ մարդկության հավաքական կերպարի դերակատարությունն ունի: Այդ է վկայում Աստուծո՝ Նորին ուղղված հարցի դիմափոխումն Ադամի եւ ստարանայի օրինակով. Նոր ԼԸ 4-ում հարցն այլաբանորեն վերաբերում է Ադամին եւ ստարանային, ովքեր Քրիստոսի մարդեղացման խորհուրդն այդպես էլ չկարողացան հասկանալ՝ չնայած աստվածանալու նրանց մեծ ցանկությանը⁴⁵: Առ այս հարկ է նշել, որ ինչպես Առակաց գրքի մեկնության մեջ, այնպես էլ այստեղ Նամամի մեկնաբանական բանալին Քրիստոսի մարդեղության կամ հենց Քրիստոսի խորհուրդն է (mysterium Christi): Նոր ԼԸ 8, 11, 12, 16, 17, 19, 23-27, 31-32, 34, 36, ԼԹ 1, 9, 15-16, 18 համարներում համայնական մեկնության այլաբանական եւ «պրամաբանական» լուծումը Քրիստոսի մարդեղության եւ հարության փնտրիչություններն են: Ներառյալ է, որ վերոնշյալ համարներում նկարագրված բնության այս երեւոյթները, որոնք քիչ թե շատ չափով բարերար ազդեցություն ունեն մարդկային կենցաղակերպի վրա, այլաբանորեն վերագրվում են Քրիստոսին, իսկ իրենց բացասական որակով

41 Antti Laato & Johannes C. de Moor (ed.), *Theodicy in the World of the Bible*, Brill, Leiden-Boston 2003:

42 «Մատենագիրք Նայոց», հր. Թ, էջ 522:

43 «Գիպրե եւ ամենագէտն զխորհուրդս չարին. երաման եւր անել ի վերայ Յոբայ գիտործութիւն, զի ցուցի հանդէս նահապակին», «Մատենագիրք Նայոց», հր. Թ, էջ 113:

44 «Գիրք Նարեանց», Երուսաղէմ, 1993, էջ 325. հմմտ. Sergio La Porta, "Concerning Job: Chapter 22 of the Sixth Volume of Grigor Tat'ewac'i's Girk' Hare'manc'", *St. Nerses Theological Review* 2:2 (1997), 131-140, որպէս հեղինակը բնութարկում է սույն մեկնության սկզբնաղբյուրների հարցը:

45 Տե՛ս «Նամամայ ասացեալ մեկնութիւն», էջ 522:

աչքի ընկնողները՝ սափանային: Օրինակ, Նոր ԼԸ 16-ում «զբազուկս ամբարտաւանից խորակեցեր» նախադասությունը վերաբերում է խաչով սափանայի կործանմանը⁴⁶, կամ 19-րդ համարում «զի՛նչ Կեղի խաւարի»՝ խորհրդանշում է «զՆեոինն բնակութեան վայրսն»⁴⁷, իսկ 29-րդ համարի բացափրությունն այս մոտեցման ամենավառ օրինակն է.

**«Յո՛յր արգանդէ ելանէ սառն. զսափանա նշանակէ:
Իբր զջուր ծորեալ իջանէ. զանկանելն նոցա յերկնից ասէ»⁴⁸:**

Բնական երեւոյթների այս շեշտված այլաբանական ընկալումը Նամամի, այսպես կոչված, մեթոդի բաղկացուցիչ մասն է կազմում: Նրա մյուս երկում՝ «Մեկնութիւն քերականին», այլաբանական բառ ու բանը նոր ուժգնությամբ եւ շեշտադրումով են հանդես գալիս:

Դիոնիսիոս Թրակացու երկի Զ գլխի մեկնության մեջ (Περὶ Στοιχείων-Յաղագս փառի)⁴⁹, որպէղ հեղինակը խոսում է Τελικὰ ὀνομάζων-ի (Վախճանականք անուանց) մասին, Նամամն այլաբանական անուն-հասկացությունների մի յուրօրինակ շարք է թվարկում⁵⁰: Այսպիսով, «Մանուէլ» նշանակում է «գորութիւն Աստուծոյ», որն իր բնագանցական (métaφυσique) փարողությամբ մեզ փրկաբանորեն (փրկ կոչման) մոտեցնում է Աստուծոյ բնութեանը: Ամպ բառն իր **սլ** վերջավորությամբ խոսում է պաշտօնի այլաբանական իմաստի մասին, որն իր հերթին խորհրդանշում է Նոգեգալուստը՝ «էջք Նոգոյն»:

ԺԲ գլխում (Περὶ ὀνομάτων - Յաղագս անուան)⁵¹ Անուան 23 խմբերն (προσαγορεύεται) աստվածաբանորեն են մեկնաբանված: Օրինակ, առաջինն (κύριον-Իսկն) ու վերջինը (μετῶσιον-Բացարձակն) վերագրվում են Աստուծուն, երկրորդը (προσηγορίκον-Առասականն)՝ աստվածային ստորոգություններին, իններորդը (διδάσκον-Երկանունն)՝ սրբերին եւ այլն:

Բայի անցյալ ժամանակը մեկնաբանելու համար Նամամն այն սահմանում է չորս փարբեր եղանակներով՝ հարաձգական (παρατατικόν), հարակայ (παρακεί μενον), գերակափար (υπερσυντέλικον), անորիշ (ἀόριστον)⁵²: Նաջորդիվ Նամամը սույն քերականական հասկացությունները մեկնաբանում է իբրեւ աստվածաշնչյան հարացույցներ: Ըստ այսմ, հարաձգականը համապատասխանում է Ադամից մինչեւ Աբրահամ ընկած ժամանակահատվածին, հարական Մովսեսի եւ մյուս մարգարեների ապրած ժամանակաշրջանն է (այսինքն՝ օրենքի), գերակափարը՝ ներկան՝ հայրնված Քրիստոսի ծննդյամբ եւ վեց դարերի⁵³ վրա փարածվող, իսկ անորիշը խորհրդանշում է

46 Տե՛ս անդ, էջ 523:

47 Անդ, էջ 524:

48 Անդ, էջ 523:

49 Տե՛ս **Н. Адоний**, Дионисий Фракийский и Армянские Толкователи, էջ 4-8:

50 Տե՛ս անդ, էջ 256-257:

51 Տե՛ս անդ, էջ 12-22 եւ 260-261:

52 Տե՛ս անդ, էջ 261-263:

53 **R. W. Thomson**, «Number Symbolism and Patristic Exegesis in Some Early Armenian Writers» in *Studies in Armenian Literature and Christianity*, ed. Aldershot, Variorum (Collected Studies Series 451) 1994, p. 125. Նայ մեկնաբանական մարի երախալիքներից մեկը՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորչի Վարդապետութեանը» նույնպես վեց

Քրիստոսի երկրորդ գալուստը՝ իբրեւ վախճանաբանական հարացույց: Նմանապիսի վերլուծությունն առկա է Նամամի՝ Առ. Լ. 21 հարվածի մեկնության մեջ, որտեղ «երիւք շարժի» արտահայտությունն այլաբանորեն պարկերում է բայի անցյալ ժամանակի երեք ձևերը (հարածգական, հարակայ եւ գերակայարար), իսկ «չորրորդին ոչ կարէ հանդարտել» նախադասության «չորրորդ»-ը՝ «անորիշ»-ը⁵⁴: Առակաց գրքի մեկնության մեջ ընդգծված այլաբանական այս վերլուծությունները կարելի է բնորոշել իբրեւ հոգեւոր ընթերցումի (Lectio divina) մի փարապետակ: Ընդհանրապես, մեկնության մեջ առկա հակիրճ ու դիպուկ բնորոշումները, այլաբանական որոշակի համակարգի որդեգրումը հեղինակի կողմից անուղղակիորեն վկայում են նշված երկի՝ հսկայական ծրագրով սրբեղծված լինելու մասին⁵⁵: Մեկնության առաջին փողերից իսկ հեղինակը սահմանում է Սողոմոնի՝ Առակաց գրքում նկարագրվող Իմաստության քրիստոսաբանական բնույթը:

«Գեղեցիկ առնէ զսկիզբն բանիս, որոյ ճանաչելն ոչ այլ ինչ է, քան թէ բանաւոր էիցս ընդ Էին ճշմարտի: «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրաբար». զո՞ր իմաստութիւնն ասիցէ: *Այս է զհարուստ եւ զհզօր զօրութիւն Աստուծոյ, որ է Բանն Աստուած, որ օրինական Սողոմոնի ի լրման ժամանակաց ծանոյց զինքն մեզ*»⁵⁶:

Ոչ միայն Առ. 1-2-ում, այլեւ Առ. 30:18-20-ում մեկնաբանության բանալին Քրիստոսի կերպարն է՝ Հինից դեպի Նոր Կտակարանը լրման փնտրիչությամբ պարկերվող: Սողոմոնն այսպիսով լրման փնտրիչության լույսի փակ ներկայացնում է Քրիստոսին՝

դար է հաշվում՝ Քրիստոսի ծնունդից մինչեւ նրա երկրորդ գալուստը, փեն **Ագաթանգեղոս**, Պարմուխին Հայոց, աշխ. Գ. ՏԵՐ-ՄԼԻՔՅԱՆԻ Եւ ՍԳ. ԿԱՆԱԿԵԱՆԵ, ԹԻՖԼԻՍ, 1909, 669-671:

54 R. W. Thomson, Commentary on the Book of Proverbs, pp. 268-269:

55 Առակաց գրքի մանկավարժական կարեւորության մասին ամենավաղ վկայությունը հայ իրականության մեջ Բարսեղ Կեսարացու «Գիրք Նարեկաց»-ի հեղինակ միաբն է. «Նա պարզ է եւ զգրոցն ճառս ընդանի լինել փեսութեանն, մինչ զի եւ անուանս նոցա ի Գրոց պիտոյանալ, եւ փոխանակ առասպելաց զիրաշխառ զգործս պարմութեանց սոցա ուսուցանել, եւ **զբարս նոցա խրաբար յԱռակաց եւ ի ճգնութեանց**», փեն **Basilio di Cesarea**, Il Libro dello Domande (Le Regole), editio de Gabriella Uluhogian, CSO vol. 536, Lovanii, in Aedibus E. Peeters, 1993, p. 74:

56 Անդ, էջ 193: Ընդհանրապես, հին եկեղեցական մտայնագրության մեջ Իմաստությունն ընկալվել է երկու հիմնական հասկանիշներով՝ ա. իբրեւ քրիստոնեական իմացություն-իմաստություն (gnosis) եւ բ. իբրեւ անձնավորված Իմաստություն՝ Հիսուս Քրիստոսի նախապիսի: Առաջին իմաստի համաձայն իմաստությունը պայմանավորում է քրիստոնեայի բարոյականությունը՝ հանձնին Հիսուս Քրիստոս Աստվածորդու: Այս առումով Իմաստության բարոյական փարոթությունն ուղիղ համեմատական է Պողոս առաքյալի բարոգած հոգեւոր իմաստությանը, որը փարբեր է այս աշխարհի իմաստությունից: Այս գաղափարի արձագանքն ենք գտնում Իգնատիոս Անտիոքացու՝ Զմյուռնիացիների ուղղված նամակում (1:1 ; SC 10, P. Th. Camelot, Cerf, Paris 1969, p. 132): Աստված արարչության ժամանակ մարդուն պատկեց Իր իսկ պարկերով եւ նմանությամբ: Առաջին քրիստոնեաներն աստվածաշնչյան այս դրվագի մեջ փնտրում էին մարդեղացած Բանի նախապիսի եւ նրա իմաստությունը՝ փրամադրելի յուրաքանչյուր քրիստոնեայի: Միով բանիվ, Քրիստոս Նոր պարկերն է (Կող. Ա 15) , մարդը՝ Քրիստոսի, որով մարդ դառնում է **Պարկերի պարկերը**: Այսպիսով քրիստոնեական իմացություն-իմաստության ակունքները հասնում են մինչեւ արարչագործություն՝ Հին Ուխտի սկիզբ, հմմտ. **J. Wolinski**, « La Sagesse chez les pères de l'Église ; de Clément de Rome à Augustin » in *Sagesse biblique de l'Ancien au Nouveau Testament*, Paris 1993, p. 422 ; **H. Jaeger**, « The Patristic Conception of Wisdom in the Light of Biblical and Rabbinical Research » in *Studia Patristica* 4, 2 (1961) ; **A.-G. Hamman**, *L'homme image de Dieu. Essai d'une anthropologie chrétienne dans l'Église des cinq premiers siècles*, Desclée, Paris (coll. Relais-études 2) 1987, pp. 35-37 ; **P. Nellis**, *Le vivant divinisé. Anthropologie des Pères de l'Église*, traduit du grec par Jean-Louis Paliere, Cerf, Paris (coll. Théologies) 1989, p. 17:

իբրեւ նախապիսպար մարգարե, իսկ նրա իմաստությունն էլ, հեպտաբար, նույնանում է Քրիստոսի քարոզած իմաստությանը: Առակաց գրքի այս մեկնության մեջ հակադրության միջոցով պատմությունը լուսաբանելու մոտեցումը լավագույնս յուրացված է Նամամի կողմից: Առակաց գրքի բացատրական արտահայտություններն ու իմաստությունը մերժելու բոլոր հնարավոր փորձերն այլաբանորեն վերաբերում են հրեաներին, իսկ Իմաստության ճառերն ու նրա հայտնությունն աշխարհում՝ քրիստոնյաներին եւ Քրիստոսի եկեղեցուն: Ասվածի ամենացայտուն օրինակն է թերեւս Առ. ԺԷ 21 հավրվածի երկու հակադիր մասերի նույն հակադրման ձեւով մեկնելու համամյան փաստարկը.

«**Այս ուրախ լինի հայր ի վերայ որդւոյ անխրապի.** որք են հրեայք՝ միշտ անխրապ մնացեալք:

Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր. Մայր եկեղեցի, որդի ի հեթանոսաց հաւաքացեալք: Որ լուար թէ Ուրախ լեր, ամուլ, որ ոչն երկնէիր, զի բազմացան որդիք քո»⁵⁷:

Բնության եւ կենդանական երեւոյթների այլաբանական իր ընկալումը Նամամն օգտագործում է Առ. Լ 18-20-ի մեջ եղած թվային՝ «երեք են եւ չորս» բանաստեղծական կառուցվածքով պատմումը մեկնելու համար: Ըստ այսմ, արծիվը՝ թռչունների թագավորը, Նոր Խոսքն է, որ երկնքից իջավ եւ, Կույսից մարմին առնելով, մարդացավ: Ծովը խորհրդանշում է Սուրբ Կույս Մարիամին, իսկ նավը՝ Նայրական Խոսքը, որ առանց հեպք ձգելու սլանում էր ծովի վրայով՝ մարդեղության փնտրիչությամբ: Օձն ու երիտասարդը նույնպես խորհրդանշում են Քրիստոսին, իսկ չորրորդը՝ շնացող կինը, պոռնկությամբ վարակված Երկրի խորհուրդն ունի, որը, սակայն, հեղեղվեց-մաքրվեց Բանի մարդեղությամբ եւ Սուրբ Նոգու շնորհներով⁵⁸: Նմանապիսկ պատկերային այլաբանության ենք հանդիպում նաեւ Առ. Լ 29-31 հավրվածի մեկնության մեջ, որտեղ արդեն Նամամը կատարելապես կիրառում է «սրբազան Կրեղեաց եւ անուանց»՝ դեռեւս վաղ եկեղեցուց ավանդված այլաբանական մեթոդը⁵⁹: Վերոնշյալ այլաբանական մոտեցումը հնարավորություն է տալիս Առակաց գրքում հանդիպող կենդանական եւ բուսական պատկերների խրատական կերպարները Կրեղեպետի քրիստոնեական բարոյականության ծիրից ներս՝ շար հաճախ նույնացնելով դրանք Քրիստոսի անձի, նրա փնտրիչությունների, Եկեղեցու եւ եկեղեցական համայնքի, քրիստոնյաների եւ անհավաք հրեաների հակադրության հետ եւ այլն: Սրա մասին լավագույնս վկայում է հենց ինքը՝ Նամամը. «Արդ յայտնապես յայտնէ զխորս առակաց եկեղեցոյ, ի ներքս բերելով զհոգեսիրացն զՆոգոյն պարգամս, ասելով թէ՝ իմ բանքս առակացս առ ի լուր ձեզ յինէն, ոչ է յինէն յատուկ յորում անմիտ մարդոյ կարծելով եւ եմ. այլ ճշմարիտ Աստուծոյ են խօսեցեալքս»⁶⁰:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Նամամ Արեւելցու երկը՝ իբրեւ հայ մեկնողական գրականության առաջին ինքնուրույն պոետներից մեկը, զարգանում եւ ձեւավորվում է իբրեւ այդպիսին այլաբանական մի ուրույն համակարգի մեջ: Այն ունի նաեւ շեշտված մանկավարժական-խրատական հենք եւ հիմնականում նպատակաուղղված

57 R. W. Thomson, Commentary on the Book of Proverbs, p. 247:

58 Անդ, էջ 268:

59 Ավելի հանգամանորեն փնտ F. Wutz, Onomastica Sacra, 1914, TU 41.

60 R. W. Thomson, նշվ. աշխ., էջ 273:

Է քրիստոնյաների առաջ «թարգմանությամբ» եւ մեկնությամբ բացահայտելու Նին Կրակարանի իմաստասիրական գրքերում պարկերվող բարոյականության ուսուցչին՝ Քրիստոսին: Արարչագործության հրաշքները՝ կենդանական եւ բուսական աշխարհները, բնական երեւոյթները Նամամի կողմից ընկալվում են իբրեւ ինքնուրույն արարեւոյթներ (phenomène)՝ դրանով իսկ մղելով քրիստոնյային Աստծո արարչագործության մեջ փնտրելու քրիստոնեական բարոյականության դասագիրքը: Միաժամանակ, նրա գործերի մեծ մասի մեջ կարմիր թելի պէս անցնող այս այլաբանական մեթոդի միօրինակությունը եւս մեկ անգամ վկայում է Նամամի կողմից մեկնաբանական որոշակի համակարգի ստեղծման եւ զարգացման մասին: